

տանութեան մը զոհն է վարդապետը . օգտուելուով խանը կաթողիկոսին հրաւերէն՝ կ'առնէ վարդապետը հետը եւ հացկերոյթի ժամուն կը հաշտեցնէ երկու կողմերը : Վարդապետը վերադարձաւ Շոթոթ :

Կաթողիկոսը առ երեսս հաշտուած էր վարդապետին հետ : Ի Դաւրէթ, ուր եկած էին Մեղքիսեղեկ եւ իր աթոռակիցներէն մին, Պօղոս վարդապետ հանուեցաւ Ղառչղայ խանին ատեանը, «որ էր առաւել խրոխտ եւ մեծազոյն փառօք» : Վարդապետը այս անգամ ալ դուրս եկաւ արդարացած (1618) : Ներսէս Վ. Մովսեցի այս զէպքի առթիւ կը հիւսէ վարդապետին գովքը ¹.

«Զյաճախ ուտելն արգելոյր եւ կարկէչ էր յանդգնութեան .

Մանաւանդ արեղայից խափանիչ համարձակութեան .

Զնախնի կարգն յառաջ ածէր, կանոնօք դնէր ի յատեան .

Վըկայէր վասն աշխարհի՝ զի էին դործքն իւր չարութեան :

Վասն որոյ իմ նըմանիքս որ կրօնիւք յերկիր կորացան՝ Կարի ատեցին ըզնա, բարկութեան նախանձ բրբղեցան : Հազար եւ վաթսուն եւ եօթն յաւելեալ Հայոց թըւական, Յանկարծ շարժեցան մարդիկ, թինդ առին եւ ժողովեցան .

Կաթողիկոսունը երկու ², եպիսկոպոսք համանդամայն, Արեղայք եւ վանականք եւ տէրտէրք շատ զուժարեցան .

¹ Հայապատում, § 398 :

² Ասոնք են անշուշտ Մեղքիսեղեկ եւ Աւետիս . որովհետեւ Դաւիթ 1615էն սկսեալ առանձնացած էր ի Սպահան : Դաւրիթեցի միայն զՄեղքիսեղեկ կը յիշէ (281) :